

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ
Կ Ա Ր Գ**

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի պետական ագրարային համալսարանի պատվավոր կոչումների շնորհման ընթացակարգը և չափանիշները:

Համալսարանում կանոնադրության 15-րդ կետի է) ենթակետի դրույթներին համապատասխան սահմանվում են Հայաստանի պետական ագրարային համալսարանի պատվավոր կոչումները .

- . Համալսարանի պատվավոր դոկտորի
- . Համալսարանի պատվավոր պրոֆեսորի
- . Համալսարանի վաստակավոր պրոֆեսորի
- . Համալսարանի վաստակավոր գիտաշխատողի
- . Համալսարանի վաստակավոր աշխատողի

Համալսարանի պատվավոր գիտական և աշխատանքային կոչումների շնորհման համար, թեկնածուները առաջարկվում են համապատասխան ֆակուլտետների գիտական խորհուրդների, գիտական լաբորատորիաների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից:

Համալսարանի գիտական խորհուրդը քննարկում է ներկայացրած թեկնածությունները և որոշում է կայացնում կոչումների շնորհման համար: Գիտական խորհրդի նիստի կոչում շնորհելու որոշումը ամրագրվում է համապատասխան դիպլոմով կամ վկայականով:

Համալսարանի պատվավոր դոկտորի կոչում

Պատվավոր դոկտորի կոչում շնորհվում է անձանց, ովքեր չեն աշխատում Հայաստանի պետական ագրարային համալսարանում և

ա) վերջին 3 տարում համագործակցում են Համալսարանի գիտական աշխատանքներին, բարձրացնելով ակադեմիայի գիտական հեղինակությունը, ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում:

բ) իրենց գիտական խորհրդատվությամբ, գիտական զեկուցումներով, աշխատանքներով օգնում են համալսարանին, առաջարկելով նոր գիտական ուղղություններ, մշակում են գիտական ժամանակակից նախագծեր, ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսության գիտության և արտադրության զարգացմանը և առաջընթացին:

գ) միջպետական, միջգերատեսչական և միջբուհական համագործակցության ծրագրերի շրջանակներում աջակցում են հիմնելու ժամանակակից լաբորատորիաներ և համալրել ու գործող լաբորատորիաները նոր տեխնիկայով և տեխնոլոգիաներով:

դ) օգնում են համալրել Համալսարանը նոր գիտական գրականությամբ և ամսագրերով:

ե) նպաստում են համագործակցել արտասահմանյան գիտաշխատողների հետ, օգնում նոր գիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին:

Համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում

Պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհվում է այն անձանց, ովքեր չեն աշխատում համալսարանում և

ա) վերջին 3 տարում համագործակցում են համալսարանի աշխատանքներին, ուսումնամեթոդական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար: Օգնում են համալսարանին, արտասահմանյան բուհերի ուսումնական աշխատանքների առաջավոր փորձը ներդնելու և բարեփոխումներ իրականացնելու համար:

բ) իրենց հեղինակությամբ, գիտական, ուսումնամեթոդական գրականությամբ, հոդվածներով, զեկուցումներով օգնում են համալսարանին ուսումնական աշխատանքները կատարելագործման համար:

գ) օգնում են համալսարանին, իրենց խորհրդատվությամբ, այլ աշխատանքներով ստեղծում նոր մասնագիտություններ, դրանց համար ժամանակակից ծրագրեր, ինչպես նաև հեռանկարային պլաններ, որով էլ նպաստում են թողարկվող մասնագետների որակի բարելավմանը:

դ) իրենց ակտիվ գործնեությամբ, հրապարակային ելույթներով, հոդվածներով բարձրացնում են համալսարանի միջազգային հեղինակությունը, օգնում համագործակցել արտասահմանյան առաջավոր բուհերի հետ, ինչպես նաև ժամանակակից գիտությամբ և ուսումնական մեթոդներով զինված երիտասարդ կադրերի պատրաստման համատեղ դիպլոմների տրամադրման գործում:

և) նպաստում են երիտասարդ դասախոսների պատրաստմանը այլ երկներում և ՀՊԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանը:

Համալսարանի վաստակավոր պրոֆեսորի կոչում

Վաստակավոր պրոֆեսորի կոչում շնորհվում է համալսարանի վաստակաշատ պրոֆեսորներին ուժքեր.

ա) վերջին 30 տարուց ավել աշխատում են համալսարանում և ակտիվ մասնակցում են համալսարանի գիտամանկավարժական գործնեությունը:

բ) ունեն 100-ից ավել հրատարակված գիտական աշխատանքներ, այդ թվում՝ դասագրքեր, ձեռնարկներ, հոդվածներ և մեթոդական ցուցումներ:

գ) ղեկավարում են ասպիրանտների և մագիստրոսների ատենախոսություններ, մասնակցել են նոր ուսումնական կամ գիտական ծրագրերի մշակման, ստեղծման և կատարելագործման աշխատանքներին:

Կազմակերպել և ստեղծել են ուսումնական և գիտական լաբորատորիաներ:

Համալսարանի վաստակավոր գիտաշխատողի կոչում

Շնորհվում են համալսարանի այն աշխատողներին, որոնք ունեն դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի կոչում:

ա) մշակել և ստեղծել են գյուղատնտեսական գիտության նոր ուղղություններ, լուծել հիմնարար խնդիրներ, կատարել տեխնիկական, տնտեսական, տեխնոլոգիական այնպիսի մշակումներ, որոնք օգնել են գյուղատնտեսական գիտության առաջընթացին:

բ) մշակել և ստեղծել են նոր գյուղատնտեսական ժամանակակից սորտեր, ցեղեր, տիպեր, դեղամիջոցներ, մեքենաներ, սարքեր, գործիքներ, որոնց ներդրումը բերել են գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

գ) ղեկավարել են գյուղատնտեսական արտադրության համար կարևոր գիտական նախագծեր, ծրագրեր, մասնակցել են դրանց ստեղծման և իրականացման աշխատանքներին:

դ) մեծ վաստակ ունեն գյուղատնտեսական գիտության զարգացմանը: Հրատարակել են 150 ավելի գիտական գրքեր, հոդվածներ, արտադրությանը օգնող մեթոդական հանձնարարականներ, ձեռնարկներ, ցուցումներ և առաջարկություններ և առնվազն 2 մենագրություն:

ե)կարդացել են գյուղատնտեսության բնագավառի համար զեկուցումներ հանրապետությունում և հանրապետությունից դուրս, մասնակցել են միջազգային գիտաժողովների կազմակերպմանը և անցկացմանը: Կարդացել են զեկուցումներ, անցկացրել են խորհրդատվություններ գյուղատնտեսության բնագավառի և ֆերմերային տնտեսության աշխատողների համար:

Համալսարանի վաստակավոր աշխատողի կոչում

Շնորհվում է համալսարանի այն աշխատողներին, որոնք համալսարանի ստորաբաժանումներում աշխատել են առնվազն 25 տարի, անբասիր և բարեխիղճ կերպով: Իրենց աշխատանքով նպաստել են համալսարանի տնտեսության անխափան աշխատանքին, ուսումնական և գիտական գործընթացներին: